

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 5

Թեմատիկ գրավոր աշխատանք №1

(15 միավոր)

Դասարանը՝ _____, ամսաթիվը՝ _____

Ազգանուն, անուն՝ _____

ՏԱՐԲԵՐԱԿ 1

1. Նշվածներից ո՞րն է.

ա) 6 միլիոն 170 հազար 84 թիվը.

1) 617084 2) 6001784 3) 60017084 4) 6170084 *(1 միավոր)*

բ) յոթ միլիարդ երեսուներեք միլիոն հինգ հարյուր վեց թիվը.

1) 737506 2) 7037506 3) 7037000506 4) 70370506 *(1 միավոր)*

2. Քանի՞ զրո է գրվում յոթ հարյուր միլիոն թվի գրառման մեջ.

1) 6 2) 7 3) 8 4) 9 *(1 միավոր)*

3. Նշվածներից ո՞րն է 45006 թվի ներկայացումը կարգային գումարելիների տեսքով.

(1 միավոր)

1) $4 \cdot 100 + 5 \cdot 10 + 6 \cdot 1$

2) $4 \cdot 1000 + 5 \cdot 100 + 6 \cdot 1$

3) $4 \cdot 10000 + 5 \cdot 100 + 6 \cdot 1$

4) $4 \cdot 10000 + 5 \cdot 1000 + 6 \cdot 1$

4. Գտնել ամենափոքր եռանիշ և ամենամեծ երկնիշ թվի գումարը: *(2 միավոր)*

Պատ.՝ _____

5. Գտնել 245-ից փոքր ամենամեծ թիվը, որի միավորների կարգում գրված է 7:

(1 միավոր)

Պատ.՝ _____

6. Կատարել գործողությունները:

(2 միավոր)

$$14 \cdot 9 - 104 : 13$$

Պատ.՝ _____

7. Կատարել գործողությունները և վանդակում տեղադրել թվերի համեմատման

նշաններից ($>$, $<$, $=$) մեկը այնպես, որ ստացված գրառումը ճիշտ լինի: (2 միավոր)

$$1 \cdot 36 - 0 : 28 \quad \square \quad 25 : 1 + 0 \cdot 63$$

8. Լրացնել բաց թողած փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն: (2

միավոր)

$$5 \cdot 4 + 3 \cdot 6 = 110$$

9. Միքայելի տարիքը 3-ով փոքր է իր 11 տարեկան քրոջ տարիքից և 4 անգամ փոքր

հոր տարիքից: Քանի՞ տարեկան է Միքայելի հայրը:

(2 միավոր)

Հավաքած միավորը՝ _____ , գնահատականը՝ _____ :

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 5

Թեմատիկ գրավոր աշխատանք №1

ԲՆԱԿԱՆ ԹՎԵՐ ԵՎ ԶՐՈ

(15 միավոր)

Դասարանը՝ _____, ամսաթիվը՝ _____

Ազգանուն, անուն՝ _____

ՏԱՐԲԵՐԱԿ 2

1. Նշվածներից ո՞րն է.

ա) 7 միլիոն 160 հազար 48 թիվը.

1) 716048 2) 7160048 3) 70016048 4) 7001648 (1 միավոր)

բ) ութ միլիարդ երեսուկոթ միլիոն չորս հարյուր հինգ թիվը:

1) 8037000405 2) 8037405 3) 837405 4) 80370405 (1 միավոր)

2. Քանի՞ զրո է գրվում վաթսուն միլիոն թվի գրառման մեջ.

1) 6 2) 7 3) 8 4) 9 (1 միավոր)

3. Նշվածներից ո՞րն է 56007 թվի ներկայացումը կարգային գումարելիների տեսքով.

(1 միավոր)

1) $5 \cdot 10000 + 6 \cdot 1000 + 7 \cdot 1$

2) $5 \cdot 10000 + 6 \cdot 100 + 7 \cdot 1$

3) $5 \cdot 1000 + 6 \cdot 100 + 7 \cdot 1$

4) $5 \cdot 100 + 6 \cdot 10 + 7 \cdot 1$

4. Գտնել ամենափոքր քառանիշ և ամենամեծ եռանիշ թվի գումարը: (2 միավոր)

Պատ.՝ _____

5. Գտնել 546-ից փոքր ամենամեծ թիվը, որի միավորների կարգում գրված է 8:

(1 միավոր)

Պատ.՝ _____

6. Կատարել գործողությունները:

(2 միավոր)

$$15 \cdot 9 - 108 : 18$$

Պատ.՝ _____

7. Կատարել գործողությունները և վանդակում տեղադրել թվերի համեմատման

նշաններից (>, <, =) մեկը այնպես, որ ստացված գրառումը ճիշտ լինի: (2 միավոր)

$$1 \cdot 25 - 0 : 63 \quad \square \quad 32 : 1 + 0 \cdot 57$$

8. Լրացնել բաց թողած փակագծերն այնպես, որ ստացվի հավասարություն:

(2 միավոր)

$$5 \cdot 6 + 2 \cdot 9 = 120$$

9. Անահիտի տարիքը 3-ով փոքր է իր 12 տարեկան եղբոր տարիքից և 4 անգամ

փոքր մոր տարիքից: Քանի՞ տարեկան է Անահիտի մայրը: (2 միավոր)

Հավաքած միավորը՝ _____, գնահատականը՝ _____ :